

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՑԻՒ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 228

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղաք Բերդ
Երկու հազար ութ թվականի մարտի չորսին

Վարձատու՝ ՀՀ Բերդ համայնք, գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Լ.Բեկի փողոց հինգ, որի անունիս համայնքի ղեկավարի կողմից երկու հազար ութ թվականի փետրվարի քսանին տրված լիազորագրով հանդես է գալիս քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Գավրի Մելիքյանը, անձնագիր AB0346062 տրված 27.12.1996թ. 056-ի կողմից /վաղեղակալության ժամկետը երկարաժամկետ է մինչև 27.12.2011 թվականը/, բնակության վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Ռ.Մելիքյանի փողոց, տուն տասներեք, մի կողմից և Վարձակալ՝ Հայաստանի Հանրապետություն, որի անունից «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և ագրարական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Կառավարական տուն երեք, աշխատակազմի ղեկավարի կողմից երկու հազար ութ թվականի հունվարի տասնվեցին տրված լիազորագրով հանդես է գալիս Բերդի գրադվածության տարածքային կենտրոնի տնօրեն Մարտին Ապրեյանը, անձնագիր AH0315200, տրված 28.03.2007թ. 056-ի կողմից, բնակության վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Խորենացու փողոց, քառասունհինգ շենք, բնակարան քսանհինգ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՈՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել իրեն պատկանող Տավուշի մարզի Բերդ քաղաքի Լևոն-Բեկի փողոցի թիվ 5 /հինգ/ հասցեում գտնվող վաղեղական շենքից՝ 41,94 /քառասունմեկ ամբողջ իննսուներս հարյուրերորդական/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ու բնակելի տարածք /Անշարժ գույքի Սեփականության իրավունքի վկայականում՝ չորրորդ հարկի թիվ 2 /երկու/ սենյակը՝ 35,34 /երեսունհինգ ամբողջ երեսուներս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 1 /մեկ/ միջանցքից՝ 6,6 /վեց ամբողջ վեց տասներորդական/ քառակուսի մետր մակերեսով, որ կազմում է ամբողջի 1/62/մեկ վարսուներկուերորդ մասը, այսուհետև՝ Օրյելու:

1.2. Սույն պայմանագիրը կնքվում է 10 /տասը/ տարի ժամկետով, մինչև երկու հազար տասներ թվականի փետրվարի քսանյոթը:

1.3. Վարձատուն վարձակալության հանձնվող օբյեկտի սեփականատերն է, ինչը հաստատվում է 0265640 Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով, տրված երկու հազար մեկ թվականի մայիսի տասնմեկին ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Բերդի տարածքային տնօրենարանում կողմից:

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ Օրյելուը վաճառված, նվիրված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանուցանված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի, կալանքի տակ չի գտնվում /ճիշտակերպ տեղեկանք թիվ 0240523 տրված երկու հազար ութ թվականի փետրվարի քսանհինգին ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Բերդի տարածքային տնօրենարանում կողմից/:

1.5. Սեփականատիրոջ փոփոխությունը հիմք չէ վարձակալության պայմանագրի դադարեցման համար և այն շարունակում գործել նոր սեփականատիրոջ հետ հարաբերություններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից՝ Օրյելուն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակության համապատասխան,

2.1.2. երբ Վարձակալը Օրյելուից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները,

2.1.3. Վարձակալի կողմից վարձավճարը վճարելու էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մոծելու վարձավճարը:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Օրյելուը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից / /մեկ/ օրվա ընթացքում: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Վարձատուն և Վարձակալը,

2.2.2. Օրյելուը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում,

2.2.3. Օրյելուը վարձակալին հանձնել դրան վերաբերող փաստաթղթերով,

2.2.4. իր հաշիվն կատարել վարձակալության հանձնված Օրյելուի հիմնական վերանորոգումը,

2.2.5. Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օրյելուի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների գրավ, սերվիտուտ և այլն/ մասին,

2.2.6. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օրյելուի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը,

2.2.7. մեկանշա ժամկետում քննարկել Օրյելուի նշանակության փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգման և վերանորոգվողման հարցերի հետ կապված Վարձակալի գիտումները,

2.2.8. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օրյելուն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքի հիմնական վերանորոգում կատարելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ աստիճանավոր կարգով ընդունված որոշումների հետ,

2.2.9. Վարձակալի հաշիվն կնքել վարձակալության հանձնվող Օրյելուի ասպիտավազության պայմանագիր,

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.1 կետում աստիճանավոր ժամկետում իրեն տրամադրել Օրյելուը, Օրյելուի վերաբերող փաստաթղթերը,

2.3.2. Օրյելուի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելու իր ընտրությամբ

2.3.2.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Օրյելուի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատույցի Օրյելուի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը,

2.3.2.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը,

2.3.2.3. պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,

2.3.3. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինչը պատասխանատվություն չի կրում, Օրյելուի վիճակը վատթարացել է.

2.3.4.Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու սույն պայմանագրում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.4.1.կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությանը ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին,

2.3.4.2.պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը,

2.3.4.3.պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները,

2.4.Վարձակալը պարտավոր է՝

2.4.1.Օրյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան,

2.4.2.Ժամանակին մուծել Օրյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վարձավճարը,

2.4.3.պայմանագրի ամրոց ժամկետի ընթացքում ժամանակին փոխանցել Օրյեկտի սպահովագրական վճարը,

2.4.4.Ժամանակին կատարել վարձակալված օրյեկտի ընթացիկ վերանորոգումը,

2.4.5.ապահովել Օրյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը,

2.4.6.առանց Վարձատուի գրավոր համաձայնության Օրյեկտում չկատարել փակ և բաց լաբանցումներ, չանել վերանախագծումներ և վերապահավորումներ: Վարձակալի կողմից Օրյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամրոցակառուցման յախառում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում գրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ Վարձակալի հաշվին և Վարձատուի որոշած ժամկետում,

2.4.7.Վարձակալը օրյեկտի տարածքում պահպանել սանիտարահամաճարակային, պետական հրշեջ վերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր կանոնները և նորմերը, Օրյեկտը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում,

2.4.8.Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Օրյեկտի վթարային վիճակի, Օրյեկտը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու հետ,

2.4.9.Վարձատուին ամիջապես տեղեկացնել Օրյեկտի աճեմ մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել /կամ սպառնում է հասցնել/ Օրյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վնասի կանխարգելման համար, ինչպես նաև Օրյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ,

2.4.10.առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ /իրավաբանական անձի/ կանոնադրական /բաժնեհավաք/ կապիտալի մեջ Օրյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում/: Առանց նշված համաձայնության վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը հիմք է պայմանագրի միակողմանի լուծման համար,

2.4.11.ապահովել Վարձատուի և նրա ներկայացուցիչների անարգել մուտքն Օրյեկտ՝ դրա զննման և ստուգման համար,

2.4.12.ապահովագրական պայմանագրով նախատեսված սպահովագրական դեպքը վրա հասնելու դեպքում անհապաղ օր միասին հաղորդել համապատասխան իրավասու մարմիններին /նստիկանություն, հրշեջ ծառայություն, հաղորդակցության ուղիների անվտանգությունն ապահովող ծառայություն և այլն/ և ապահովագրական կազմակերպությանը՝ վերջինիս ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռնելով զննել տարածքը,

2.4.13.ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օրյեկտի սպառնալիք ազատումի մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ:

2.4.14.Օրյեկտն ազատելիս այն պատշաճ վիճակում, ակտով հանձնել Վարձատուին՝ հաշվի առնելով բնակամասն մաշվածությունը,

2.4.15.սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վնասիկ տակ են դնում Օրյեկտը, իսկ վարձակալված Օրյեկտից դուրս բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

2.4.16.իր հաշվին կատարել օգտագործված էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլ վճարումները:

3.ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձակալված Օրյեկտի համար վարձաչափ է սահմանվում տարեկան 75500 /յոթանասուներեք հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ, որը վճարվում է անկամիսի՝ մինչև յուրաքանչյուր տարվա վերջը:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՍՏԻՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով:

4.2.Եթե Վարձակալը պայմանագիրը դադարեցնուց հետո չի վերադարձրել Օրյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.3.Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օրյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հարթելի է եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալը հայտնաբերեր Օրյեկտը զննելիս:

5.ՎԱՐՁԱԿԱԼԱՅ ՕՐՅԵԿՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

5.1.Վարձակալված Օրյեկտի Վարձակալի կատարած քաժանելի քաղաքավորումները համարվում են նրա սեփականությունը:

5.2.Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությանը կատարել է վարձակալված Օրյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարեցնուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

5.3.Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալված Օրյեկտից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

5.4.Վարձակալված Օրյեկտի ստորաիզացիոն միջոցների հաշվին կատարած ինչպես քաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են վարձատուի սեփականությունը:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂՄԻՄԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՏԱՐՎՈՒՄ

6.1.Վարձատուի պահանջով, օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1.Օրյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով,

6.1.2.Լաճանորեն վատարարացրել է Օրյեկտի վիճակը,

6.1.3.սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը,

6.1.4.սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Օրյեկտի ընթացիկ վերանորոգումը:

6.2.Վարձակալի պահանջով, օրենքով սահմանված կարգով, սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե

6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչնդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

6.2.2. Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչնդոտող քերտություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտին չեն եղել Վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս.

6.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ/ՅՈՐՄԱՍՏԻՈՐ/

Սույն պայմագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Բերդի տարածքային ստորաբաժանումում 30/երեսում/ օրվա ընթացքում: Պայմանագիրը կնքված է համարվում իրավունքի պետական գրանցման պահից:

8.2. Սույն պայմանագրում կատարվող բոլոր լրացումները և փոփոխությունները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 468 հոդվածով սահմանված կարգով:

8.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք բերելու դեպքում՝ դատական կարգով:

8.4. Սույն պայմանագրի նոտարական կարգով վավերացման և իրավունքի պետական գրանցման ծախսերը վճարում է Վարձակալը:

8.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական Օրինակներից մեկը պահվում է Տավուշի նոտարական գրասենյակում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

Նոտարի կողմից կողմերին պարզաբանվեց գործող օրենսդրության նորմերը: Պայմանագրի բովանդակությունը քաղաքացիական կողմերի պահանջները:

ՎԱՐՉԱՏՈՒ՝

ՀՀ Բերդի համայնք
իսպառված անձ՝ քաղաքապետարանի
գլխավոր մասնագետ Դավիթ Սելիբջյան



ՎԱՐՉԱԿԱԼ՝

Հայաստանի Հանրապետություն
իսպառված անձ՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության աշխատակազմ»
պետական կառավարչական հիմնարկի Բերդի
գրավանդության տարածքային կենտրոնի տնօրեն
Ասյուհն Եպիֆանյան



Երկու հազար ութ քվականի մարտի չորսին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Տաուշ նոտարական տարածքի նոտար Գոհար Նավասարդյանի կողմից: Կողմերը պայմանագիրն ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունեությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների իրավունքները և անշարժ գույքի նկատմամբ Բերդ համայնքի իրավունքները ստուգված են:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում, երեսուն օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 2028 ուժ
վճարված է պետական տուրք և ծառայության վճար Պետական
տուրքի և Նոտարիատի մասին ՀՀ օրենքների համաձայն
Նոտար




Գ. Նավասարդյան

ՃԵՆՏԻ ՀԿՏԿԿԿԿԿԿԿ

ՆԵՐՍԻ ՈՒՂ 3

1:200

/ՄԱՍ Կ 2 Կ Ա Մ Բ /



ՏՈՒՐԱՄ ԶԿԿԿ

H = 5.20

h = 3.0

Δ = 0.40

d = 0.10

Δ₁ = 0.20 ÷ 0.25


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆՏԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐՎԻՍ

ԿԿՏԿԿԿԿ Կ. Գրիգորյան / Կ. Գրիգորյան /
/ ԿԱՍՏԱՆԿԱՆ ԳՐԱՆՈՒՄՆԵՐ /

Handwritten text at the top left of the page.

Handwritten text at the top center of the page.

Handwritten text below the top center text.



Handwritten text in the middle left section, possibly a list or notes related to the plan.



Handwritten text at the bottom left of the page, likely a signature or date.